Ավանդական քրիստոնեությունն Իսրայելի կրոնական արմատականության թիրախում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 15.09.2025 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ կենտրոնն ուսումնասիրում է Իսրայելի ավանդական քրիստոնեական համայնքների վրա հարաճուն ճնշման դինամիկան: Հիմնական ուշադրության կենտրոնում է Երուսաղեմի հայկական թաղամասի «Կովերի այգի» հողամասի շուրջ տեղի ունեցած միջադեպը, որը դիտարկվում է որպես ավելի լայն հակաքրիստոնեական քաղաքականության ցուցիչ օրինակ: Նշվում է, որ վարչապետ Բենիամին Նեթանյահուի կաբինետը, որը ձևավորվել է ուլտրաարմատական հրեական խմբակցությունների հետ կոալիցիայի արդյունքում, քրիստոնեական գործոնը համակարգված կերպով «վտարում է» երկրի կյանքից: Սա դրսևորվում է իրավական, տնտեսական (հարկային ճնշում, կորպորատիվ արշավանք) և սոցիալական (ֆիզիկական հարձակումներ, օրենսդրական նախաձեռնություններ) ճնշումների ձևերով: Առանձին վերլուծվում է ամերիկյան «քրիստոնեական սիոնիզմի» դերը, որը, չնայած արտաքին համերաշխությանը, պարադոքսալ կերպով ծառայում է իսրայելական արմատականության շահերին՝ ի վնաս ավանդական քրիստոնեական եկեղեցիների:

Բանալի բառեր: *Իսրայել, Երուսաղեմ, ավանդական քրիստոնեություն, Կովերի այգի, կրոնական արմատականություն, հակաքրիստոնեական քաղաքականություն, քրիստոնեական սիոնիզմ, գույքային վեճեր:*

Օգոստոսի վերջին կրկին հայտնի դարձավ Հին Երուսաղեմի հայկական թաղամասի «Կովերի այգու» տեղամասի հնչեղ պատմությունը: Երուսաղեմի հայ համայնքը, *«Թաղամասի փրկության շարժումը»* և մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպություններ տարածել են հայտարարություն, որում Հայ Առաքելական եկեղեցու Երուսաղեմի պատրիարքարանին մեղադրում են *Xana Gardens* ընկերության հետ գաղտնի կերպով երկրորդ գործարքը կնքելու մեջ՝ նշված հողամասն այդ ընկերությանը 99 տարի ժամկետով վարձակալության հանձնելու մասին[2]:

Առաջին պայմանագիրն ստորագրվել էր դեռևս 2021 թ. հուլիսին, սակայն տեղի հայ համայնքի բողոքի ցույցերը, որոնց աջակցում էին Պաղեստինի վարչակազմը և Հորդանանի կառավարությունը, թույլ չտվեցին գործարքը կայանա[3]: Նախաձեռնվել է վարչաիրավական հետաքննության գործընթաց, որին զուգահեռ հասարակական նախաձեռնություններ են ծավալվել՝ պաշտպանելու տեղանքը, կազմակերպելու շուրջօրյա կամավոր պարեկություն և այս հարցում հայկական կազմակերպությունների դիրքորոշման քարոզչություն:

---

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 12.09.2025 թ.:

[2] «Коровий сад» не продается: армянские организации Иерусалима предупреждают Патриархат». Голос Армении, 27.08.2025, https://bit.ly/4mUpc9k (բեռնման օրը՝ 05.09.2025).

[3] «Армянский патриархат сдал иерусалимскую землю в аренду». Вестник Кавказа, 29.09.2021, https://vestikavkaza.ru/analytics/armanskij-patriarhat-sdal-ierusalimskuu-zemlu-v-arendu.html (բեռնման օրը՝ 05.09.2025).

Լարվածությունն իր գագաթնակետին հասավ 2023 թվականին, երբ «*Կովերի այգու*» հայ պաշտպանները ստիպված էին դիմադրել *Xana Gardens* ավստրալիական ընկերության ու նրա հրեա սեփականատեր Դենիս Ռուբինշտեյնի շահերին ծառայող տեղի հրեա ծայրահեղ արմատականների և ոստիկանության հարձակումներին:

Ի պաշտպանություն «Կովերի այգու» հասարակական շարժումը ճնշում է գործադրել Երուսաղեմի պատրիարքարանի վրա՝ Սբ. Էջմիածնին կոչ անելով ազդել պատրիարք Նուրհան Մանուկյանի վրա: Արդյունքում, 2023 թվականի մայիսին Երուսաղեմի Սբ. Յակոբեանց Եղբայրության Սինոդը[4] ստիպված էր ապօրինի ճանաչել գործարքը: Դրա պատասխանատվությունը դրվեց Պատրիարքարանի անշարժ գույքի կառավարման պատասխանատու Բարեթ վարդապետ Երեցյանի վրա, ով, ըստ Պատրիարքարանի, գործել է իր հայեցողությամբ և մոլորության մեջ գցել Նուրհան պատրիարքին: Երեցյանը կարգալույծ է արվել[5], որից հետո որոշ ժամանակով համայնքի և Պատրիարքարանի հարաբերություններում կրքերը հանդարտվել են:

Մինչդեռ, *«Թաղամասի փրկության շարժման»* կողմից օրերս արտահայտված մտահոգությունները վկայում են, որ, այնուամենայնիվ, որոշ բանակցություններ են տեղի ունենում Իսրայելի կառավարության և *Xana Gardens* ընկերության ներկայացուցիչների հետ: Երուսաղեմի պատրիարքարանը, ըստ էության, հաստատել է այս տեղեկությունը՝ հայտարարելով, թե ինքը ոչ մի *«գաղտնիք»* էլ չի թաքցնում և թե *«գործընթացն ընթանում է խստիվ օրենքի շրջանակներում»*[6]*:* Ակնհայտ է, որ *Xana Gardens*-ը, վայելելով Իսրայելի կառավարության լիակատար աջակցությունը, հետևողականորեն առաջ է տանում գործարքը, հավանաբար համաձայնելով իր կողմից սոսկ որոշ զուտ ձևական զիջումների կամ առաջարկելով առավել բարենպաստ ֆինանսական պայմաններ Երուսաղեմի պատրիարքարանի համար:

Իսրայելի իշխանությունների ճնշմանը հետագայում ևս դիմակայելու Երուսաղեմի հայ համայնքի ակտիվիստների հնարավորությունը սահմանափակ է: Տեղի հայկական հասարակական-քաղաքական կազմակերպությունների և Պատրիարքարանի միջև առկա հակասություններից բացի, «*Կովերի այգին*» պաշտպանելու համայնքի կարողության վրա նույնպես բացասաբար է ազդում ՀԱԵ-ի կենսագործունեության մեջ տիրող ճգնաժամային շրջանը՝ կապված ՀՀ քաղաքական իշխանությունների հետ հակամարտության հետ, և, ի մասնավորի, պաշտոնական Երևանի պասիվ դիրքորոշումն այս հարցում, որը, ըստ

[4] Սուրբ Յակոբեանց (Հակոբեանց) Եղբայրության Սինոդը (կամ Սուրբ Հակոբեանց Եղբայրությունը) Հայ Առաքելական Եկեղեցու Երուսաղեմի պատրիարքարանի կառավարման բարձրագույն մարմինն է:

[5] «Священнослужителя, сдавшего в аренду земли армянского квартала в Иерусалиме, лишили сана». Армянский музей Москвы и культуры наций, https://www.armmuseum.ru/news-blog/2023/5/10/the-priest-who-leased-the-land-of-the-armenian-quarter-in-jerusalem-was-put-to-death (բեռնման օրը՝ 05.09.2025).

[6] «Иерусалимский патриархат ААЦ опровергает сообщение о тайной сделке вокруг «Коровьего сада». Голос Армении, 21.09.2025, https://bit.ly/4gblghS (բեռնման օրը՝ 05.09.2025).

երևույթին, չի ցանկանում «*սադրել*» Թել Ավիվին: Հարկ է նշել նաև, որ Պաղեստինի վարչակազմը կորցրել է իր դերն Արևելյան Երուսաղեմում, որը Գազայում և Արևմտյան Երուսաղեմում տեղի ունեցած վերջին իրադարձությունների համապատկերում գործնական առումով զրկվել է Բ. Նեթանյահուի կառավարության հետ կառուցողականորեն հաղորդակցվելու մեխանիզմներից: «*Կովերի այգին*» Երուսաղեմում գտնվում է Պաղեստինի վարչակազմի պատասխանատվության գոտում, սակայն Նեթանյահուի ուլտրաաջ կաբինետը, որպես պատրվակ բերելով պաղեստինյան բոլոր ազգային կառույցների ահաբեկչական բնույթի մասին պատումը, հակված չէ նրանց հետ երկխոսության, առավել ևս՝ փոխզիջման որևէ հարցում:

Կարող է թվալ, թե հայ համայնքի անշարժ գույքի շուրջ վեճերը հատկապես հայկական դավանանքի նկատմամբ Իսրայելի իշխանությունների բացասական վերաբերմունքի հետևանք են, դավանանք, որը Երուսաղեմի քրիստոնեական ժառանգության պահապաններից մեկն է միայն: Կարելի է նաև ենթադրել, որ Երուսաղեմի Հայոց պատրիարքության վրա Թել Ավիվի ապօրինի ճնշումը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված է ՀԱԵ-ի համեմատաբար թույլ միջազգային քաղաքական պաշտպանությամբ, ի տարբերություն Սուրբ Երկրի մյուս նշանակալից դավանանքների, որոնք վայելում են Վատիկանի և հունական ուղղափառ աշխարհի աջակցությունը, ինչը բացառում է արշավանքը դրանց սեփականության դեմ: Թերևս այս պատումներն անհիմն չէին ոչ վաղ անցյալում, սակայն Թել Ավիվի վերջին քայլերը, այժմ արդեն Երուսաղեմի հունական ուղղափառ դավանանքի ուղղությամբ, ցույց են տալիս, որ Թել Ավիվի ճնշումը հայերի վրա պետք է դիտարկել նրա քաղաքականության ավելի լայն համատեքստում:

Այսպիսով, 06.08.2025թ. Իսրայելը սառեցրել է Երուսաղեմի հունական ուղղափառ պատրիարքության բոլոր հաշիվները՝ ստիպելով Պատրիարք Թեոփիլոս III-ին հարկեր վճարել եկեղեցական այն գույքի համար, որը *«չի օգտագործվում կրոնական նպատակներով»:* Այնուամենայնիվ, օգոստոսի վերջին, մի շարք երկրների գլխավոր հյուպատոսների ուժեղ դիվանագիտական ճնշման ներքո, Երուսաղեմի քաղաքապետարանը հետ կանգնեց այս արմատական միջոցից՝ Պատրիարքարանին թույլ տալով աշխատավարձ վճարել եկեղեցու աշխատակիցներին, ուսուցիչներին և ուղղափառ միաբանության սպասարկող անձնակազմին[7]: Սակայն խնդիրն այդպես էլ չսպառվեց:

Երուսաղեմում քրիստոնեական ունեցվածքի առևտրային շահագործումից ֆինանսական պահումների շուրջ վեճերն ու լարված բանակցությունները շարունակվում են 2018 թվականից, երբ քաղաքում ընդունվեց վարչական ակտ, որով վերացվում է քրիստոնեական վայրերի հատուկ կարգավիճակը: Երուսաղեմի քրիստոնեական եկեղեցիներն ու համայնքները, մի կողմից, և քաղաքապետարանը, մյուս կողմից, ավելի քան 6 տարի է, ինչ չեն կարողանում

[7] «Greek Orthodox Patriarchate bank accounts in Jerusalem reportedly unfrozen». Orthodox Christianity, 29.08.2025, https://orthochristian.com/172211.html (բեռնման օրը՝ 06.09. 2025).

փոխհամաձայնության հասնել այս հարցում, և բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ հակամարտությունը կշարունակվի նաև տեսանելի ապագայում: Այդ է վկայում Իսրայելի իշխանությունների՝ քրիստոնեական համայնքների կենսունակությունն ապահովելու պատրաստակամությունը հաստատութենական մակարդակում՝ համաձայն իր կազմավորման առաջին տարիներին հրեական պետության ստանձնած պարտավորությունների:

Իսրայելի և Պաղեստինի քրիստոնեական համայնքները վաղուց ահազանգել են, որ եկեղեցական գույքի վերաբերյալ տեղական մարմիններ մակարդակում տարաձայնությունները վարչական և իրավական հակամարտությունների հետևանք չեն, այլ Թել Ավիվի հետևողական քաղաքական ուղեգծի դրսևորումներից մեկն են, որն ուղղված է երկրում քրիստոնեական ազդեցությունը նվազագույնի հասցնելուն: Իսրայելի քրիստոնյաներն ավանդաբար ենթարկվում են հրեական հասարակության ծայրահեղ արմատական շրջանակների ճնշմանը՝ հրեական միջավայրում շովինիստական տրամադրություններ ու կրոնական անհանդուրժողականություն պարունակող պետության պասիվ դիրքորոշման համապատկերում: Այնուամենայնիվ, Բ. Նեթանյահուի վարչապետության վերջին՝ երրորդ ժամկետից ի վեր (2022թ.), որը հնարավոր դարձավ «Լիկուդ» կուսակցության և Կնեսետում ծայրահեղ արմատական խմբակցությունների միջև կոալիցիայի ձևավորման շնորհիվ, Թել Ավիվի հակաքրիստոնեական քաղաքականությունն էլ ավելի ընդգծուն դարձավ:

Մինչեւ 2023 թվականը քրիստոնյաների հալածանքները դարձել էին համակարգային, ինչը բացահայտեց իշխանությունների ցանկությունը՝ հաստատութենականացնել այս գործընթացը ինչպես հասարակական, այնպես էլ քաղաքական-վարչական մակարդակներում: Երուսաղեմի քրիստոնեական դավանանքների ներկայացուցիչները բացահայտորեն խոսում էին այն մասին, որ Բ. Նեթանյահուն անձամբ է նպաստում քրիստոնյաների քաղաքական հալածանքներին և ներում է ծայրահեղ արմատականներին՝ հոգևորականների վրա ֆիզիկական հարձակումների և քրիստոնեական սրբավայրերի պղծման հարցում: Այս ամենը հիմք է տվել, որ Վատիկանի կողմից նշանակված Երուսաղեմի լատին պատրիարք Պիերբատիստա Պիցաբալլան հայտարարի, թե *«Իսրայելում կրոնական ազատության վերաբերյալ քաղաքական թեզը լրջորեն վտանգված է»*[8]:

Հավանաբար, Իսրայելի կառավարությունը կարող էր իր յուրահատուկ ոճով խստորեն դատապարտել Երուսաղեմի պատրիարքին և մյուս քրիստոնյա առաջնորդներին զրպարտության և նույնիսկ հակասեմականության համար, եթե *Associates Press*-ին Պիցաբալլայի տված հարցազրույցից մեկ ամիս առաջ Բ. Նեթանյահուի համախոհները հակաքրիստոնեական հիստերիան չհասցնեին իր գագաթնակետին՝ պաշտոնապես

[8] «Радикальное правительство Нетаньяху притесняет христиан в Израиле – The Associated Press». Октагон Медиа, 13.04. 2025, https://octagon.media/novosti/radikalnoe_pravitelstvo_netanyaxu_pritesnyaet_xristian_v_izraile_the_associated_press.html (բեռնման օրը՝ 06.09.2025).

հայտարարելով, թե անհրաժեշտ է արգելել Հիսուս Քրիստոսի անվան օգտագործումը երկրում: Լիկուդի հետ կոալիցիայի մեջ գտնվող ուլտրաուղղափառ «*Միացյալ Թորայի հուդայականություն*» կուսակցության անդամներ Մոշե Գաֆնին և Յակով Աշերը 2023 թվականի գարնանը Կնեսետ են ներկայացրել օրինագիծ՝ «*Իսրայելում Քրիստոսի անունը որպես Աստծո հիշատակումը», «քրիստոնեական գաղափարախոսության տարածումը» և «քրիստոնեական հավատքի մասին խոսակցություններն»* արգելելու մասին[9]: Օրենքի խախտման համար նախատեսվում էր պատիժ մինչև երեք տարվա ազատազրկմամբ: Այս համապատկերում Բ. Նեթանյահուի ցանկացած փորձ՝ Իսրայելի քրիստոնյա առաջնորդներին մեղադրելու կողմնակալության և *«Ժողովրդավարական հրեական պետության»* նկատմամբ անշնորհակալ վերաբերմունքի մեջ՝ անհեթեթ տեսք կունենար: Եվ, այնուամենայնիվ, նույնիսկ քաղաքական համախոհների այս աղմկահարույց նախաձեռնությունն Իսրայելի վարչապետին չստիպեց որևէ քայլ անել լարված իրավիճակը թուլացնելու ուղղությամբ: Վերոնշյալ օրինագծի ճակատագրի համատեքստում նա սահմանափակվեց միայն այն հայտարարությամբ, թե քրիստոնեական համայնքի դեմ ուղղված ոչ մի օրենք չի մտցնի:

Մինչդեռ Իսրայելի քրիստոնյաները հետզհետե ավելի քիչ պատճառ ունեն հավատալու, որ Բ. Նեթանյահուի օրոք երկրում կնվազի անհանդուրժողականության և այլատյացության քաղաքականությունը: Համայնքային և հոգևոր առաջնորդները գիտակցում են, որ իրենց հողերի ասպատակիչ զավթումները, հարկային ճնշումը և հրեա ծայրահեղ արմատականների կանոնավոր հարձակումները քրիստոնյա փոքրամասնությունների ներկայացուցիչների վրա կարող են ճանապարհ հարթել ապագայում լայնածավալ ջարդերի համար: Իսրայելի քրիստոնյաներն այլևս պատրանքներ չունեն՝ հստակ գիտակցելով, որ հրեական պետության ավանդական պրագմատիկ քաղաքականությունը ներկայումս զգալիորեն փոխակերպվում է միստիկ թալմուդական ուսմունքներով, որոնք կտրականապես մերժում են երկրում կրոնական համակեցության և հանդուրժողականության ցանկացած մոդել: Սա չի ընդունվում ավանդական հուդայականություն դավանող իսրայելցի շատ քաղաքացիների կողմից, ովքեր կարծում են, որ Բ. Նեթանյահուն և նրա շրջապատն ընկել են ուժային կառույցներ ներթափանցած ծայրահեղ օրթոդոքս հրեական աղանդերի գաղափարական ազդեցության տակ, և պետական քաղաքականության մեջ այժմ առաջնորդվում են ոչ թե իրատեսությամբ, այլ աշխարհի հրեականության բացառիկության գաղափարի վրա հիմնված դոկտրիններով: Իսրայելի չափավոր քաղաքական խմբակցությունների և նրանց աջակցող ընտրազանգվածի կարծիքով՝ սա ոչ մի տեղ տանող ճանապարհ է, որն արտացոլում է գաղութատիրական

[9] «В Израиле разработали законопроект, запрещающий упоминать имя Иисуса Христа». СПЖ, 26.03.2023, https://spzh.eu/ru/news/72652-v-izrale-razrabotali-zakonoproekt-zapreshchajushchij-upominat-imja-iisusa-khrista (բեռնման օրը՝ 06.09.2025).

տերությունների ազգային շովինիզմը, բայց առավել հրեշավոր ձևերով[10]: Որպես ապացույց բերվում է Գազայում տիրող իրավիճակը, որտեղ հայտարարված հակաահաբեկչական գործողությունն ստացել է մի ամբողջ ժողովրդի կոտորածի բնույթ, երբ միակ նշաձողը պաղեստինցիների էթնիկ ինքնությունն ու իսլամական հավատքն են:

Ենթադրվում էր, որ 10.07.2023 թ.-ի՝ Իսրայելի վրա ՀԱՄԱՍ-ի ահաբեկչությունից հետո Թել Ավիվի համար, որը նախապատրաստվում էր պաղեստինյան ծայրահեղականության դեմ կատաղի պայքարին, օգտակար կլիներ քրիստոնեական դավանանքների և համայնքների հետ վերջին տարիների լարված հարաբերությունների թուլացումը, հատկապես այն հանգամանքի համապատկերում, թե ինչպես են Արևմուտքի քրիստոնեական երկրները լիովին արտահայտել իրենց աջակցությունն Իսրայելի «*արդար զայրույթին*» ու նրան օգնության ձեռք մեկնել: Սակայն «*հակաահաբեկչական արշավն*» իր էությամբ գերազանցել է քրիստոնեական ավանդույթի մեջ թույլատրելի դաժանության բոլոր սահմանները, ինչն աներևակայելի էր նույնիսկ մուսուլմանների դեմ միջնադարյան խաչակրաց արշավանքների մութ դարաշրջանում:

Քրիստոնեական աշխարհը չհասկացավ Գազայում ավելի քան 60.000 խաղաղ բնակիչների մահը և մոտ 1000 մզկիթի միտումնավոր ավերումը: Արևմուտքն ավելի զայրացած էր Իսրայելի կողմից պաղեստինյան տարածքում[11] ու Լիբանանում քրիստոնեական եկեղեցիների ոչնչացմամբ, ինչը ներկայացվել է որպես անհրաժեշտ ռազմական միջոց կամ տեխնիկական սխալ: Ոչ պակաս չափով քրիստոնեական աշխարհի վրա ազդել են նաև այն հանգամանքի դրսևորումները, որ Թել Ավիվը, դիտարկվող ժամանակահատվածում, գործնական առումով չի շեղվել Երուսաղեմի դավանական միությունների ունեցվածքը վերաբաշխելու և հրեական ուլտրաարմատականների շարունակվող հարձակումները խրախուսելու իր քաղաքականությունից: Այսպիսով իսկ, «*իսլամական ծայրահեղականության*» դեմ Գազայում տարվող պատերազմը Իսրայելին ոչ միայն չեն մղել դեպի մեկ այլ «*աբրահամյան կրոնի*»՝ քրիստոնեության հետ համերաշխության հոլովույթի, այլև նպաստել է, ոչ առանց իշխանությունների մասնակցության, երկրում հակաքրիստոնեական ծայրահեղականության վերարտադրմանը, որը փորձում է իր ձեռնարկումները հիմնավորել միստիկ նախապաշարմունքներով:

Հատկանշական է, որ Իսրայելում կրոնական անհանդուրժողականությունը դրսևորվում է հենց Սուրբ Երկրում լայնորեն ներկայացված ավանդական քրիստոնեական դավանանքների՝ կաթոլիկության, ուղղափառության, ՀԱԵ և մի շարք Արևելյան Եկեղեցիների առնչությամբ: Միևնույն ժամանակ, Ավետարանական եկեղեցիները, որոնք

[10] «Почему так много евреев осуждают войну Израиля в Газе?». Россия в глобальной политике, 23.11.2023, https://globalaffairs.ru/articles/pochemu-evreei-osuzhdayut/ (բեռնման օրը՝ 06.09.2025).

[11] «В Палестине заявили об уничтожении более тысячи мечетей в секторе Газа». РИА НОВОСТИ, 21.08.2025, https://ria.ru/20250821/izrail-2036639432.html (բեռնման օրը՝ 06.09.2025).

չունեն նմանատիպ ներկայացվածություն տարածաշրջանում և միայն փոքր չափով են հատվում արմատական հրեական վարդապետությունների շահերի հետ, համեմատաբար հանդուրժողական վերաբերմունք են վայելում: Իրենց հերթին, ավետարանականները, որոնք հիմնականում կենտրոնացած են Հյուսիսային Եվրոպայում և Միացյալ Նահանգներում, մինչև վերջերս ընդգծված բարեհաճություն էին ցուցաբերում Իսրայելին և նրա վարած քաղաքականությանը:

Հենց ավետարանական աստվածաբանության հիման վրա, որից առաջացել են տասնյակ ամերիկյան եկեղեցիներ, 1970-ական թթ.-ին ԱՄՆ-ում ձևավորվեց, այսպես կոչված, *«քրիստոնեական սիոնիզմ»* դոկտրինը, որն ի վերջո վերածվեց քաղաքական շարժման: Համաձայն *«քրիստոնեական սիոնիզմի»* աշխարհայացքի՝ ԱՄՆ-ն պետք է իր գործողություններով մոտեցնի «Արմագեդոնի» մարգարեության իրականացումը, որին կհաջորդի Քրիստոսի Երկրորդ Գալուստը: Այս համատեքստում Իսրայելին ցուցաբերվող աջակցությունը ոչ միայն քաղաքական ընտրություն է, այլև աստվածաշնչյան մարգարեություններով կանխորոշված կրոնական պարտք:

Իսրայելի ագրեսիվ գործողություններին աջակցությունը՝ ընդհուպ մինչև նրա կողմում պատերազմին մասնակցությունը, «*քրիստոնեական սիոնիստների»* հասկացությամբ բարիքներ են, որոնք ավելի են մոտեցնում ժամանակների վերջի մասին աստվածաշնչյան մարգարեությունների իրականացումը[12]: ԱՄՆ քաղաքական վերնախավի վրա «*քրիստոնեական սիոնիստների*» ազդեցությունը, ում, բնականաբար, ամենայն կերպ աջակցում էին հրեական լոբբիստները, տարիների ընթացքում միայն աճում էր: Նրանց դիրքերը հատկապես ուժեղ էին հանրապետականների շրջանում, և Դոնալդ Թրամփի նախագահության առաջին և երկրորդ փուլերում նրանք արդեն առանցքային դիրքեր էին զբաղեցնում Սպիտակ տան վարչակազմում: Ինքը՝ ԱՄՆ-ի գործող նախագահը, ով իր հռետորաբանության մեջ հիմք չի տալիս իրեն կրոնական համոզմունքների կրող համարելու համար և հաճախ քննադատում է Իսրայելին[13], այնուամենայնիվ, ԱՄՆ-ի իսրայելական քաղաքականությունը գործնականում կառուցում է «*քրիստոնեական սիոնիստների»* ագրեսիվ դոկտրինին լիովին համապատասխան: Սա, իր հերթին, լիովին ներդաշնակեցնում և համալրում է տարածաշրջանում իսրայելական արմատականությունը, որի զոհը, սակայն, պարադոքսալ կերպ ոչ միայն իսլամական գործոնն է, այլև ավանդական քրիստոնեական եկեղեցիների շահերը: Այս հարցում «*քրիստոնեական սիոնիստները*» հակված չեն իրենց վարդապետության հրամայական նպատակները զոհաբերել հանուն ավանդական

[12] «Христианский сионизм, Армагеддон, антихрист как основы ближневосточной политики Трампа». Фонд стратегической культуры, 16.03.2025, https://www.fondsk.ru/news/2025/03/16/khristianskiy- sionizm-armageddon-antikhrist-kak-osnovy-blizhnevostochnoy-politiki (բեռնման օրը՝ 07.09.2025).

[13] Бард М., «Сионист ли Трамп?». STMEGI, 17.11.2024, https://stmegi.com/opinions/posts/ 122482/sionist-li-tramp/ (բեռնման օրը՝ 07.09.2025).

եկեղեցիների դիրքերի պահպանման, համաքրիստոնեական համերաշխության և փոխօգնության:

Իրերի այս դրության վրա ազդում է նաև ավետարանական ուսմունքների պատմական մրցակցությունը, որի խորքերից ծնվել է «*քրիստոնեական սիոնիզմը*»՝ կաթոլիկ, հունական ուղղափառ, հայկական և այլ ավանդական դավանանքների հետ միասին: Սուրբ Երկրում ներկա գտնվելու իրենց պատմական իրավունքի, ինչպես նաև դարավոր ժառանգության՝ ներառյալ՝ սրբավայրերի, դպրոցների և հողերի պահպանման համար Երուսաղեմում ներկայացված դավանանքների պայքարն ավետարանականների համար ոչ այլ ինչ է, քան գույքի, նյութական բարիքների և ֆինանսական մուտքերի պաշտպանություն: Միաժամանակ, Իսրայելի գործողությունները նրանք դիտարկում են որպես բարձրագույն, «*աստվածային*» կարգի առաքելություն և, հետևաբար, դրան կարող են զոհաբերվել «*մասնավոր շահերն*» ու ավանդական եկեղեցիների «*մանրախնդրությունը*», եկեղեցիներ, որոնք «*անտեսում են աստվածաշնչյան մարգարեությունների հայտնությունները*»:

Դրանով իսկ, Սուրբ Երկրում վերջին տարիների իրադարձությունների համատեքստում «*քրիստոնեական սիոնիստները*» հայտնվեցին նույն այն ճամբարում, որտեղ գտնվում էին շովինիստները և արմատական հրեական աղանդների հետևորդները: Ստեղծված քաղաքական-գաղափարական համակեցությունը նոր իրականություն է ձևավորում տարածաշրջանում՝ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործընթացները կախվածության մեջ դնելով սրբազան տեքստերի կանխակալ մեկնաբանություններից:

Միևնույն ժամանակ, վերջերս միտումներ են նկատվում նման նախաձեռնություններն առաջ մղողների ընտրական բազայի թուլացման ուղղությամբ՝ ինչպես Իսրայելում, այնպես էլ՝ ԱՄՆ-ում: Հրեական պետությունում չափավոր հուդայականության կողմնակիցներն ավելի ու ավելի են հանդես գալիս հօգուտ կրոնական բազմակարծության ու Պաղեստինի և ամբողջ իսլամական աշխարհի հետ խաղաղության հաստատման: Մասնավորապես, նրանք ընդգծում են իրենց բարեհաճությունը քրիստոնեական գործոնի հանդեպ, որը պատմականորեն բազմակողմ ներկայություն է վաստակել Սուրբ Երկրում: Իր հերթին, ԱՄՆ-ում «*քրիստոնեական սիոնիստների*» քաղաքականությունը՝ հաջակցություն Բ. Նեթանյահուի աջ արմատական կառավարության, սկսում է վստահության պակաս զգալ խորքային և ավանդական Ավետարանական Ամերիկայից: Ամերիկացի քրիստոնյաները, որոնք հիմնականում ներկայացված են տասնյակ Ավետարանական եկեղեցիներով, իշխանությունների գործողություններում ավելի հաճախ են տեսնում հակասություններ քրիստոնեական բարոյականության համընդհանուր արժեքների հետ:

Gallup գործակալության կողմից 2018 թվականի գարնանը ԱՄՆ-ում անցկացված սոցիոլոգիական հարցումը ցույց տվեց, որ Իսրայելին Վաշինգտոնի աջակցությունը վայելում

է շարքային քաղաքացիների ճնշող մեծամասնության անվերապահ հավանությունը[14]: Սակայն արդեն 2024 թվականի մայիսին *Langer Research Associates* և *Ipsos* ընկերությունների կողմից անցկացված հարցումները բացահայտեցին հրեական պետությանը ամերիկյան աջակցության կողմնակիցների թվի նկատելի նվազման դինամիկան[15]: Ի վերջո, 2025 թվականի ամռանը միևնույն *Gallup-ը* գրանցել է Իսրայելին համակրող հարցվածների թվի ռեկորդային անկում՝ համապատասխանաբար ցույց տալով Թել Ավիվին Վաշինգտոնի օգնությունը դատապարտող հարցվածների թվի կրկնակի աճ[16]:

Այսպիսով, քրիստոնեական Ամերիկան, հետևելով Եվրոպային, ցույց է տալիս «*հեռանալու*» նշաններ «*Քրիստոնեական սիոնիզմից*» և գերբնական դոկտրիններից, որոնք իշխանություն են ներթափանցել ԱՄՆ-ում և Իսրայելում ու հանդես են գալիս հանուն աստվածաշնչյան մարգարեությունների ժամկետների «*ձեռակերտ արագացման*»: Այս առումով հարց է ծագում՝ Սուրբ Երկրում առկա քաոսը կհանգեցնի՞ քրիստոնեական աշխարհի ակտիվ համախմբմանը հիմնաքարային արժեքների և աստվածաշնչյան խաղաղության ուխտերի շուրջ, թե՞ եկեղեցիները կգերադասեն հետ կանգնել՝ հնարավորություն տալով ֆանատիկներին շարունակել շահարկելու ժամանակների վերջի մասին մարգարեությունները:

---

[14] «Опрос: общественная поддержка Израиля в США на рекордно высоком уровне». 15.03.2018, https://lechaim.ru/news/opros-obshhestvennaya-podderzhka-izrailya-v-ssha-na-rekordno-vysokom-urovne/ (բեռնման օրը՝ 07.09.2025).

[15] «Опрос показал, что американцы думают о помощи Израилю». РИА НОВОСТИ, 03.05.2024, https://ria.ru/20240503/opros-1943716231.html (բեռնման օրը՝ 07.09.2025).

[16] «Новый опрос показывает падение общественной поддержки войны Израиля в секторе Газа в США». EDNEWS, 30.07.2025, https://ednews.net/ru/news/world/689607-noviy-opros-pokazivaet-padenie-obshestvennoy (բեռնման օրը՝ 07.09.2025).